**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**29.04.2026թ. կնքված N ԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-26/47**
**ծածկագրով ապրանքների գնման պայմանագրի**

ք. Մասիս << 22 >> մայիսի 2026թ.

Մասիս համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Նորայր Հակոբյանի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Արշին 91 գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, այսուհետև Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 29.04.2026թ. կնքված N ԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-26/47 ծածկագրով գնման պայմանագրի 8.5 և 8.8 կետերը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև հաշվի առնելով Վաճառողի 20.05.2026թ. դիմումը (մտից N 6074)՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 29.04.2026թ. կնքված N ԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-26/47 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:

**2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.4 Սույն համաձայնագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԳՆՈՐԴ**
**Մասիսի համայնքապետարան**
**ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4**
**ՀՀ Ֆինանսների նախարարություն**
**Հ/Հ 900 432 450 022**
**ՀՎՀՀ 04240324**

Ն. Հակոբյան ____________________
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
**«ԱՐՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ**
**ք. Երևան, Նոր Նորք,**
**Մոլդովական փ., 60շ.**
**<<Ակբաբանկ>> ԲԲԸ**
**Հ/Հ 220313511150000**
**ՀՎՀՀ01091058**

Ա. Մկրտչյան ____________________
/ստորագրություն/
Կ.Տ